ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԲԿԳԿ-ՄԱԾՁԲ-25/47

ք. Երևան «03» 10 2025թ.

Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեն ի դեմս գլխավոր քարտուղար՝ Լ. Ֆարմանյանի, ով գործում է Կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԷՐՆՍԹ ԸՆԴ ՅԱՆԳ» ՓԲԸ-ն, ի դեմս գլխավոր տնօրեն՝ Է. Հայրապետյանի, ով գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում

է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 100,800,000.00 (մեկ հարյուր միլիոն ութ հարյուր հազար) ՀՀ դրամ, ներառյալ՝ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան հանձման-ընդունման արձանագրությունների երկկողմ հաստատման տարվա դեկտեմբերի 30-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող

պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Կատարողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կատարողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 4) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը:

7.13 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.14 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 3, N 3.1 և N 4 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.15 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Բարձրագույն կրթության և գիտության կոմիտե	«ԷՐՆՍԹ ԸՆԴ ՅԱՆԳ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Օրբելի 22	Երևան 0010, Վ. Սարգսյան 2, Կամար ԲԿ, 7-րդ հարկ
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	Ամերիաբանկ ՓԲԸ
Հ/Հ 900011056042	Հ/Հ 1570011391280100
ՀՎՀՀ 02704199	ՀՎՀՀ 00057741
Գլխավոր քարտուղար՝	Գլխավոր տնօրեն՝
---------- Լ. Ֆարմանյան	---------- Ն. Հայրապետյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
«03» 10 2025թ. կնքված
ԲԿԳԿ-ՄԱԾՁԲ-25/47 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Հ/հ	Ծառայության							
	Միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Անվանումը	Հատկանիշները (տեխնիկական բնութագիր)	Չափման միավոր	Գումար	Ընդհանուր քանակը	Մատուցման	
							Հասցեն	Ժամկետը
1	66171100/2	Ֆինանսական իրագործելիության, կենսունակության և ներդրումային հնարավորությունների վերլուծության խորհրդատվական ծառայություններ	Տեխնիկական բնութագիրը ներկայացված է ստորև Հավելված 1.1-ով	դրամ	100,800,000.00	1	Ծառայությունները մատուցվելու են հեռավար, սակայն Պատվիրատուի պահանջի դեպքում կատարողը պետք է ապահովի ՀՀ ԿԳՄՍՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի տարածքում ներկայություն՝ համաձայնեցնելով Պատվիրատուի հետ	Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 5 ամսվա ընթացքում՝ ըստ Հավելված 1.1-ով ներկայացված ժամանակացույցի

** Ծառայությունների մատուցման ժամկետը, իսկ փուլային ձևով պայմանագրի կատարման դեպքում՝ առաջին փուլի ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ծառայությունները մատուցել ավելի կարճ ժամկետում:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Բարձրագույն կրթության և գիտության կոմիտե
ՀՀ, ք. Երևան, Օրբելի 22
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011056042
ՀՎՀՀ 02704199

Գլխավոր քարտուղար՝

---------- Լ. Ֆարմանյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«ԷՐՆՍԹ ԸՆԴ ՅԱՆԳ» ՓԲԸ
Երևան 0010, Վ. Սարգսյան 2, Կամար ԲԿ, 7-րդ հարկ
Ամերիաբանկ ՓԲԸ
Հ/Հ 1570011391280100
ՀՎՀՀ 00057741

Գլխավոր տնօրեն՝

---------- Է. Հարությունյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 1.1
«03» 10 2025թ. կնքված
ԲԿԳԿ-ՄԱԾՁԲ-25/47 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Ֆինանսական իրագործելիության, կենսունակության և ներդրումային հնարավորությունների վերլուծություն:

1. Ներածություն

Հայաստանի Հանրապետության կառավարությունը («Կառավարությունը») նախաձեռնել է «Ակադեմիական քաղաք» ծրագրի նախագծումը, կառուցումը և զարգացումը:

Այս Տեխնիկական առաջադրանքի (TOR) նպատակն է ներգրավել խորհրդատվական ծառայություններ՝ Հայաստանի խոշորամասշտաբ կրթական և ուղեկցող ենթակառուցվածքների զարգացման ծրագրի ֆինանսական իրագործելիության, կենսունակության և ներդրումային հնարավորությունների համապարփակ վերլուծության համար:

Ընտրված խորհրդատուն կկատարի հետևյալ աշխատանքները՝

Գնահատել ծրագրի ծախսերը

Վերլուծել եկամուտների հնարավոր տարբերակները

Ուսումնասիրել ֆինանսավորման կառուցվածքները

Իրականացնել խիստ ֆինանսական կենսունակության գնահատում (ներառյալ NPV, IRR, ինքնածախսածածկման ժամկետ, DSCR, ինչպես նաև զգայունության և սցենարային վերլուծություններ)

Ներկայացնել ռազմավարական ներդրումային առաջարկություններ՝ համապատասխանեցված կայունության նպատակներին

Բոլոր վերլուծությունները պետք է ներառեն կայունության և դիմակայունության ուժեղ բաղադրիչներ՝ հատուկ ուշադրություն դարձնելով էներգաարդյունավետությանը, կլիմայի հարմարեցմանը և շրջակա միջավայրի վրա նվազագույն ազդեցությանը:

2. Նպատակներ

Խորհրդատվության հիմնական նպատակներն են՝

Իրականացնել ծախսերի մանրամասն գնահատում

Հաշվարկել կապիտալ ծախսերը (CAPEX), գործառնական ծախսերը (OPEX) և կյանքի ցիկլի ընդհանուր ծախսերը:

Մշակել եկամտային մոդելներ և ֆինանսական իրագործելիության գնահատում

Վերլուծել եկամուտների զարգացման դինամիկան և ֆինանսական կենսունակությունը ծրագրի յուրաքանչյուր փուլի համար:

Իրականացնել համապարփակ ֆինանսական կենսունակության վերլուծություն

Կիրառել ստանդարտ ֆինանսական ցուցանիշներ (NPV, IRR, ինքնածախսածածկման ժամկետ, DSCR) և սցենարային վերլուծություններ՝ գնահատելու նախագծի շահութաբերությունը տարբեր շուկայական պայմաններում:

Գնահատել ֆինանսավորման տարբերակները և առաջարկել կայուն ներդրումային ռազմավարություններ

Նույնականացնել դիվերսիֆիկացված ֆինանսավորման մեխանիզմներ (պետություն-մասնավոր գործընկերություններ, դրամաշնորհներ, խառը ֆինանսավորում, «կանաչ» ֆինանսավորում և այլն):

Նույնականացնել ֆինանսական ռիսկերը և առաջարկել մեղմման միջոցներ

Վերլուծել փոխարժեքային, քաղաքական/կանոնակարգային, ծախսերի աճի և գործառնական ռիսկերն ու առաջարկել լուծումներ:

Ներկայացնել ESG չափանիշներին համապատասխան ներդրումային առաջարկներ

Շրջակա միջավայրի, սոցիալական և կառավարման (ESG) չափանիշների ինտեգրում՝ պատասխանատու և ազդեցություն ունեցող ներդրողների ներգրավման համար:

3. Աշխատանքների շրջանակ

Խորհրդատուն կիրականացնի հետևյալ գործառույթները՝

A. Ծախսերի գնահատում

Վերլուծել ենթակառուցվածքների, օբյեկտների և գործառնական ծախսերը, ներառյալ գնաճի և ռիսկերից ապահովագրության հաշվարկները:

Համագործակցել ճարտարապետական, տրանսպորտային և ռազմավարական պլանավորման մասնագետների հետ՝ ծախսային փոփոխականների ճշգրտման համար:

Իրականացնել կյանքի ցիկլի ծախսերի վերլուծություն (սպասարկում, գործառնական ծախսեր, մաշվածություն):

Մշակել մանրամասն ծախսային գնահատական հետևյալ ուղղություններով՝

Տարածքի մաքրման և նախապատրաստման աշխատանքներ
Կրթական, կացության, ժամանցի, զվարճանքի և առևտրային օբյեկտների կառուցում
Քաղաքային ենթակառուցվածքներ (պուրակներ, կանաչ տարածքներ, կլիմայական դիմակայուն կառույցներ)
Տրանսպորտային և երկաթուղային ենթակառուցվածքներ
Մասնագիտացված կառույցներ (Արհեստական բանականության տվյալների կենտրոն, մարզադաշտ, նորարարական կենտրոններ և այլն)
Խորհրդատվական ծառայություններ և ոչ շինարարական ծախսեր
B. Եկամտային հնարավորություններ և ֆինանսական մոդելավորում
Մշակել եկամուտների մոդելներ՝ հիմնված ծրագրի փուլային իրականացման վրա:
Իրականացնել Փուլ 1-ի եկամուտների զարգացման վերլուծություն՝ ֆինանսական կայուն հիմքի ապահովման նպատակով:
Վերլուծել պետական-մասնավոր համագործակցության (PPP) մոդելները, հողային արժեքի ավելացման մեխանիզմները, վարձակալական սխեմաները և թվային տնտեսության վրա հիմնված եկամուտների աղբյուրները:
Ուսումնասիրել ներկայացված անշարժ գույքից ստացվող հնարավոր եկամուտները, որը անցնելու է «Ակադեմիական քաղաք» հիմնադրամին:
Ուսումնասիրել ESG-կապակցված խթանները և նորարարական եկամտային մեխանիզմները:
C. Ֆինանսավորման կառուցվածքներ և մեխանիզմներ
Գնահատել ֆինանսավորման բազմազան աղբյուրները (դրամաշնորհներ, վարկեր, պետական ֆինանսավորում, վենչուրային կապիտալ, ենթակառուցվածքային պարտատոմսեր):
Առաջարկել հավասարակշռված ֆինանսավորման կառուցվածքներ՝ պետական և մասնավոր ներդրումների համադրմամբ:
Ներկայացնել ֆինանսական կանխատեսումներ՝ հաշվի առնելով մակրոտնտեսական և ժողովրդագրական միտումները:
Առաջարկել ծախսերի օպտիմալացման, ռիսկերի նվազեցման և ֆինանսական գրավչության բարձրացման ռազմավարություններ (օրինակ՝ վարկային երաշխիքներ, ֆինանսական ապահովագրություն):
Նույնականացնել կայուն ֆինանսավորման տարբերակներ (կանաչ ֆինանսավորում, խառը ֆինանսավորում և այլն):

D. Ֆինանսական կենսունակություն և սցենարային վերլուծություն
Ֆինանսական ցուցանիշներ – Հաշվարկել զուտ ներկա արժեքը (NPV), ներքին եկամտաբերության ցուցանիշը (IRR), ինքնածախսածածկման ժամկետը, պարտքի սպասարկման ծածկույթի գործակիցը (DSCR) և այլ համապատասխան ֆինանսական հարաբերակցություններ:
Սցենարային և զգայունության վերլուծություն – Ուսումնասիրել շուկայի փոփոխությունների (օրինակ՝ պահանջարկի տատանումներ, շինարարական ծախսերի գերազանցում, մակրոտնտեսական տեղաշարժեր, կարգավորիչ փոփոխություններ, եկամուտների նվազում) ազդեցությունը ծրագրի ֆինանսական արդյունքների վրա:
Ինքնածախսածածկման վերլուծություն – Հաշվարկել նվազագույն եկամտային շեմերը, որոնք անհրաժեշտ են յուրաքանչյուր փուլի շահութաբերության ապահովման համար:
Ներդրումային գրավչություն – Վերլուծել ծրագրի ֆինանսական գրավչությունը առևտրային վարկատուների, ինստիտուցիոնալ ներդրողների և այլ շահագրգիռ կողմերի տեսանկյունից:

4. Արդյունքներ

Մանրամասն ծախսային գնահատման զեկույց – (ժամկետը՝ պայմանագրի կնքումից հետո 2 ամիս)
Ներառյալ զգայունության վերլուծություն և համեմատական վերլուծություն համապատասխան համարժեք նախագծերի հետ:
Առաջին փուլի մանրամասն ծախսային գնահատում (ժամկետը՝ պայմանագրի կնքումից հետո 2 ամիս)
Խորացված բաշխվածություն՝ ֆինանսական պլանավորման և ծախսերի վերահսկման համար:
Ֆինանսական իրագործելիության ուսումնասիրություն (ժամկետը՝ պայմանագրի կնքումից հետո 3 ամիս)
Համապարփակ ֆինանսական մոդելավորում՝ փուլային վերլուծությամբ, ներառյալ կապիտալ և գործառնական բոլոր ծախսերը, եկամուտների կանխատեսումները և կայունության գործոնները:
Պետք է ներառի ֆինանսական կենսունակության բաժին (տե՛ս հաջորդ կետը):
Ֆինանսական կենսունակության և սցենարային վերլուծության զեկույց (ժամկետը՝ պայմանագրի կնքումից հետո 4 ամիս)
Մանրամասն հաշվարկներ՝ NPV, IRR, ինքնածախսածածկման ժամկետ, DSCR և այլ կարևոր կենսունակության ցուցանիշների վերաբերյալ:
Առնվազն երեք սցենարային վերլուծություն (օրինակ՝ հիմնական, պեսիմիստական և օպտիմիստական սցենարներ):
Հստակ եզրակացություններ ծրագրի շահութաբերության և ներդրումային գրավչության վերաբերյալ:

Ներդրումային ռազմավարություն և ներդրողների ներգրավման պլան (ժամկետը՝ պայմանագրի կնքումից հետո 5 ամիս)

Համաձայնեցված ESG չափանիշներին և Կայուն զարգացման նպատակներին (SDGs):

Հիմնական մեսիջներ և նյութեր ներդրողների (ինստիտուցիոնալ, ազդեցության և մասնավոր ներդրողներ) ներգրավման համար:

Ֆինանսավորման տարբերակների համեմատական մատրիցա (ժամկետը՝ պայմանագրի կնքումից հետո 5 ամիս)

Ֆինանսավորման տարբեր կառուցվածքների և ներդրումային մեխանիզմների մանրամասն ռիսկ-եկամտաբերություն պրոֆիլներ:

Առաջարկություններ՝ վերջնական ֆինանսավորման ռազմավարության համար՝ հիմնված կապիտալի արժեքի, իրագործելիության, ռիսկի հանդեպ պատրաստակամության և ESG (շրջակա միջավայր, սոցիալական պատասխանատվություն և կորպորատիվ կառավարում) պահանջների վրա:

5. Հանձնարարության սպասվող տևողությունը: 5 ամիս

Արդյունքների լեզուն.

Բոլոր արդյունքներ պետք է տրամադրվեն հայերեն և անգլերեն լեզուներով՝ ապահովելու համար հասանելիություն տեղական և միջազգային շահագրգիռ կողմերի համար: Խորհրդատուն պատասխանատու է երկու լեզվով տարբերակների համապատասխանության և ճշգրտության ապահովման համար:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Բարձրագույն կրթության և գիտության կոմիտե
ՀՀ, ք. Երևան, Օրբելի 22
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011056042
ՀՎՀՀ 02704199

Գլխավոր քարտուղար՝

---------- Լ. Ֆարմանյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«ԷՐՆՍԹ ԸՆԴ ՅԱՆԳ» ՓԲԸ
Երևան 0010, Վ. Սարգսյան 2, Կամար ԲԿ, 7-րդ հարկ
Ամերիաբանկ ՓԲԸ
Հ/Հ 1570011391280100
ՀՎՀՀ 00057741

Գլխավոր տնօրեն՝

---------- Է. Հայրապետյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 2
«03» 10 2025թ. կնքված
ԲԿԳԿ-ՄԱԾՁԲ-25/47 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ծառայության դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2025թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	66171100/2	Ֆինանսական իրագործելիության, կենսունակության և ներդրումային հնարավորությունների վերլուծության խորհրդատվական ծառայություններ	-	-	-	-	-	-	-	-	-	20,160,000.00	40,320,000.00	100,800,000.00	**100,800,000.00**
Ընդամենը՝			**100,800,000.00**												

* Նանոթություն. Գնման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները նախատեսված են Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի հրապարակած, փոփոխված և լրացված գնման պլանի համապատասխան անվանատողերով:
**Վճարումը կիրականացվի ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Բարձրագույն կրթության և գիտության կոմիտե
ՀՀ, ք. Երևան, Օրբելի 22
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011056042
ՀՎՀՀ 02704199

Գլխավոր քարտուղար՝

_____ Լ. Ֆարմանյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«ԷՐՆՍԹ ԸՆԴ ՅԱՆԳ» ՓԲԸ
Երևան 0010, Վ. Սարգսյան 2, Կամար ԲԿ, 7-րդ հարկ
Ամերիաբանկ ՓԲԸ
Հ/Հ 1570011391280100
ՀՎՀՀ 00057741

Գլխավոր տնօրեն՝

_____ Է. Հայրապետյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 3
«____» _____ 2025թ. կնքված
ԲԿԳԿ-ՄԱԾՁԲ-25/47 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ
_____
_____
գտնվելու վայրը _____
հհ _____
հվհհ _____

Պատվիրատու
_____
_____
գտնվելու վայրը _____
հհ_____
հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց
_____
ստորագրություն
_____
ազգանուն, անուն
Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց
_____
ստորագրություն
_____
ազգանուն, անուն
Կ.Տ.

Հավելված 3.1
«____» _____ 2025թ. կնքված
ԲԿԳԿ-ՄԱԾՁԲ-25/47 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ Yyy-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և ____Կատարողի անունը_____-ի (այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ____պայմանագրի կնքման ամսաթիվը____ -ին կնքված N __պայմանագրի համարը__ գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Հավելված N 4
«____» _____ 2025թ. կնքված
ԲԿԳԿ-ՄԱԾՁԲ-25/47 ծածկագրով պայմանագրի

ԾԱՆՈՒՑՈՒՄ

_____ ֆինանսական գործակալի անվանումը _____ հայտնում է, որ.

1. ____ պատվիրատուի անվանումը ___-ի և _____ կատարողի անվանումը _____-ի միջև «----» _____ 20 թ. Կնքված «---------/---------» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակում իր և __ կատարողի անվանումը _____-ի միջև «----» _____ 20 թ-ին կնքվել է «----------» ծածկագրով ֆակտորինգի պայմանագիրը,
2. համաձայն է Պայմանագրի 7.12 կետով սահմանված պահանջներին:

_____
ֆինանսական գործակալի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը)

_____
ստորագրությունը

Կ. S. (առկայության դեպքում)

«--» 20 թ.